ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 3
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 7
4. ՓՈԽԱՐԺԵՔ 8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 9
   5.1. Բյուջեի եկամուտներ 9
   5.2. Բյուջեի ծախսեր 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Պետական պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 13
   6.1. Գնաճ 13
   6.2. Ավանդներ և վարկեր 14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16
8. ԱՄՓՈՓՈՒՄ 17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականը սկսվել է խոր տնտեսական անկմամբ, որը, սակայն, կարող է աստիճանաբար մեղմվել՝ պայմանավորված նախորդ տարվա ցածր բազայի առկայությամբ: Տարվա ընթացքում տնտեսական ակտիվության որոշակի վերականգնմանը կնպաստի նաև խիստ սահմանափակումների (և՛ տնտեսական, և՛ առողջապահական) բացակայությունը: Սակայն, հաշվի առնելով կառավարության պահային որոշումների գործելակերպը, սահմանափակումները ամեն պահին կարող են խստացվել՝ նպաստելով տնտեսական ակտիվության աճի դանդաղմանը:

Վերոհիշյալ գործոնները արտացոլվել են 2021թ. հունվար-փետրվար ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշների դինամիկայում: Այսպես, հունվարին գրանցվել է բավական խոր անկում՝ 8.2% (հունվար ամսվա ՏԱՑ-ի ցուցանիշը վերանայվել է դեպի ներքև՝ -7.5%-ից դառնալով -8.2%), իսկ փետրվարին անկումը, ինչպես և սպասվում էր, որոշ չափով մեղմվել է՝ նախորդ տարվա փետրվարի համեմատ կազմելով 5.3%: Արդյունքում՝ հունվար-փետրվար ամիսների կուտակային անկումը կազմել է 6.7%:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2021թ. հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ի անկումը առավելապես պայմանավորված է առևտրի և ծառայությունների ոլորտների անկմամբ, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար -4.1 և -2.7 տոկոսային կետ: Բացասական է եղել նաև արդյունաբերության նպաստումը, որը կազմել է -2.1 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-փետրվարին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության անկման տեմպը բավական խոր էր հունվար ամսին, սակայն այն զգալիորեն մեղմվել է փետրվարին: Արդյունաբերության անկման տեմպը ընթացիկ տարվա հունվար-փետրվարին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եղել է ՏԱՑ-ից ավելի խոր՝ կազմելով 7.9%:

2021թ. հունվար ամսվա տվյալներով[1] արդյունաբերության անկումը մեծամասամբ պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 18.3%

[1] Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. փետրվար ամսվա համար դեռևս չի հրապարակվել:

անկմամբ, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 10.5 տոկոսային կետ: Ընդ որում, մշակող արդյունաբերության կազմում կտրուկ անկում են գրանցել «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» (անկումը՝ -40.5%), «հիմնային մետաղների արտադրություն» (անկումը՝ -29.0%) և «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն» (անկումը՝ -83.8%) ենթաճյուղերը, որոնց արտադրանքի զգալի մասնաբաժինը արտահանվում է:

Հանքագործական արդյունաբերությունը նույնպես անկում է գրանցել ընթացիկ տարվա հունվարին, որը կազմել է 3.9% և ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստել 0.9 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղում գրանցվել է 3.2% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.6 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղի տնտեսական ակտիվությունը նվազել է 0.5%-ով՝ ընդհանուր արդյունաբերությանն ունենալով աննշան նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարությունը տնտեսության միակ ճյուղն է, որը 2021թ. սկզբից դրսևորում է աճի միտում: Այսպես, 2021թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ շինարարության ծավալն աճել է 1.1%-ով, իսկ հունվար-փետրվար ամիսների կուտակային աճը կազմել է 1.0%:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում անկումը բավական խոր է: Այս ոլորտն իր վրա կրել է ինչպես կորոնավիրուսի, այնպես էլ Արցախյան պատերազմի արդյունքում ձևավորված բացասական մթնոլորտի և անկայունության ուղղակի ազդեցությունները (մի կողմից՝ տնտեսական և առողջապահական սահմանափակումների, մյուս կողմից՝ բնակչության տրամադրությունների փոփոխության հետևանքով): Արդյունքում, ծառայությունների ոլորտի անկումը հունվար-փետրվար ամիսներին կազմել է 12.5%: Ընդ որում, տնտեսական ակտիվության անկման տեմպի դանդաղման պայմաններում, ծառայությունների անկման դանդաղումը աննշան է:

Հարկ է նշել, որ ծառայությունների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում 2021թ. հունվարին ծառայությունների անկման տեմպը նախորդ ամսվա հրապարակված 10.3%-ից նվազել է՝ հասնելով 12.7%-ի:

Հունվար ամսվա տվյալներով[2] ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» (անկումը՝ -33.2%) և «տրանսպորտային ծառայություններ» (անկումը՝ -42.4%) ենթաճյուղերի անկումներով, որոնց նպաստումները ընդհանուր ծառայությունների անկմանը կազմել են համապատասխանաբար 7.4 և 4.0 տոկոսային կետ: Ծառայությունների անկմանը հակազդել են «տեղեկատվություն և կապ» (աճը՝ 12.7%) և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» (աճը՝ 11.0%) ենթաճյուղերի աճերը, որոնց

[2] Ծառայությունների կառուցվածքը 2021թ. փետրվար ամսվա համար դեռևս չի հրապարակվել:

դրական նպաստման չափը կազմել է համապատասխանաբար 1.8 և 2.8 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում գրանցված բարձր անկումը նույնպես որոշ չափով մեղմվել է՝ կապված նախորդ տարվա բազայի էֆեկտի հետ: Փետրվար ամսին առևտրի ծավալները նվազել են նախորդ տարվա նույն ամսվա համեմատ 7.8%-ով: Հարկ է նշել, որ ս.թ. փետրվարի 18-ին ՀՀ կառավարության նիստի ժամանակ ՀՀ վարչապետը նշել էր հետևյալ մտքերը. «Հայաստանի տնտեսությունը հետճգնաժամային վերականգնման առաջին նշաններն է ցուցադրում», «Փետրվար ամսվա առաջին 15 օրերի տվյալներով հանրապետությունում հսկիչ դրամարկղային կտրոններով և հաշվարկային փաստաթղթերով արձանագրվել է 604 հազար գործարքով ավելի, քան նախորդ տարվա փետրվարի առաջին 15 օրերին, իսկ դրամաշրջանառությունը նախորդ տարվա փետրվարի առաջին 15 օրերի համեմատ աճել է 12 տոկոսով կամ շուրջ 31.4 մլրդ դրամով»: Սակայն, մակրոտնտեսական ցուցանիշների հրապարակումը ցույց է տալիս, որ տնտեսությունը վերականգնման վերաբերյալ եզրակացությունը խիստ վաղաժամ և չհիմնավորված էր, քանի որ տնտեսական վերականգնման որևէ նշան չկա ինչպես առևտրի ցուցանիշներում (ՀԴՄ կտրոնների ծավալի աճը պետք է արտացոլված լիներ առնվազն առևտրի ծավալների աճի տեսքով), այնպես էլ մնացած ոլորտների զարգացումներում:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Արտահանման ծավալների կրճատման տեմպը զգալիորեն մեղմվել է: 2021թ. հունվարին արտահանման ծավալների անկումը կազմել է 9.5% (արտահանման ցուցանիշները վերանայվել են. ըստ նախորդ ամսվա հրապարակման՝ արտահանման անկումը կազմել էր 11.3%), իսկ փետրվարին այն դանդաղել է՝ հասնելով 2.0%-ի, ինչի արդյունքում կուտակային անկման տեմպը կազմել է 5.5%:

Հունվար ամսվա տվյալներով[3] արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է «հանքահումքային արտադրանք» (անկումը՝ -10.1%), «սարքեր և ապարատներ» (անկումը՝ -78.9%) և «պատրաստի սննդի արտադրանք» (անկումը՝ -13.0%) ապրանքախմբերի անկմամբ, որոնց նպաստումները ընդհանուր արտահանման նվազմանը կազմել են համապատասխանաբար 3.9, 3.3 և 2.6 տոկոսային կետ:

[3] Արտահանման կառուցվածքը 2021թ. փետրվար ամսվա համար դեռևս չի հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալների անկման տեմպը փոքր-ինչ դանդաղել է, սակայն շարունակում է մնալ բարձր մակարդակում: 2021թ. հունվար ամսին նախորդ տարվա հունվարի նկատմամբ ներմուծումը նվազել է 18.5%-ով (ըստ նախորդ ամսվա հրապարակման՝ ներմուծման նվազումը կազմում էր 20.0%), իսկ փետրվարին անկման տեմպը դանդաղել է՝ կազմելով 13.6%: Արդյունքում, հունվար-փետրվար ամիսներին ներմուծման անկումը կազմել է 15.8%:

2021թ. հունվար ամսվա տվյալներով[4] ներմուծման անկումը պայմանավորված է գրեթե բոլոր ապրանքատեսակների ներմուծման ծավալների անկմամբ: Սակայն, առավել նշանակալի են եղել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալների նվազումները, որոնց նպաստումներն ընդհանուր ներմուծման կրճատմանը կազմել են համապատասխանաբար 4.7, 2.73 և 2.72 տոկոսային կետ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 0.8%-ով՝ նախորդ տարվա 9.6% աճի դիմաց: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 2.2 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 0.4 տոկոսով[5]:

[4] Ներմուծման կառուցվածքը 2021թ. փետրվար ամսվա համար դեռևս չի հրապարակվել:
[5] Փետրվար ամսվա աշխատավարձի ցուցանիշները ՀՀ վիճակագրական կոմիտեի գնահատականներն են, որոնք կարող են վերանայվել:

2021թ. հունվար-փետրվարին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 190,493.0 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 165,238.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 203,045.0 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2020-2021թթ. հունվար-փետրվարին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)







2021 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը շարունակել է արժեզրկվել՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, և արժևորվել ՌԴ ռուբլու նկատմամբ: Հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 8.3%, իսկ եվրոյի նկատմամբ՝ 16.8%: Նույն ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը կազմել է 8.3%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ[6]

5.1. Բյուջեի եկամուտներ

2021թ. փետրվարին պետական բյուջեի եկամուտների նվազումը փոքր-ինչ մեղմվել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2021թ. հունվար-փետրվարին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 9.6%-ով՝ կազմելով 221.7 մլրդ դրամ: Հարկային եկամուտների անկումը կազմել է 8.7%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ մեղմվելով 2.4

[6] Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները փոքր-ինչ տարբեր կլինեն:

տոկոսային կետով: Բյուջեի այլ եկամուտները նույն ժամանակահատվածում նվազել են 29.4%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները աճել են 75.7%-ով՝ կազմելով 1.1 մլրդ դրամ:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների նվազումը հունվար-փետրվար ամիսներին հիմնականում պայմանավորված է ԱԱՀ-ի (նվազումը՝ 9.4%), ակցիզային հարկի (նվազումը՝ 34.8%) և շահութահարկի (նվազումը՝ 38.1%) գծով մուտքերի անկումներով, որոնց նպաստումն ընդհանուր հարկերի նվազմանը կազմել են համապատասխանաբար 3.6, 3.0 և 1.7 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար		2021թ. հունվար-փետրվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-11.1	-11.1	-8.7	-8.7
ԱԱՀ	-2.8	-1.0	-9.4	-3.6
Շահութահարկ	-50.3	-3.6	-38.1	-1.7
Եկամտային հարկ	1.7	0.5	-1.4	-0.5
Ակցիզային հարկ	-47.5	-5.2	-34.8	-3.0
Շրջանառության հարկ	-18.5	-1.0	-16.2	-0.6
Արտոնագրային հարկ	-175.3	0.0	-129.4	0.0

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-51.3	-0.7	-45.4	-0.5
Մաքսատուրք	-8.7	-0.3	6.2	0.3
Սոցիալական վճար	54.8	0.8	64.4	1.1
Այլ հարկային եկամուտներ	-5.1	-0.1	25.8	0.5
Պետական տուրք	-27.2	-0.5	-29.1	-0.8

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերը աճել են տնտեսական ակտիվության անկման պայմաններում: 2021թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեից իրականացվել է 203.0 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավելի է 1.3%-ով:

Ծախսերի աճը պայմանավորված է ընթացիկ ծախսերի 3.3% աճով, այն դեպքում, երբ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) կրճատվել են 30.6%-ով: Կապիտալ ծախսերի խոշոր անկումը ցույց է տալիս, որ ծրագրերի թերակատարումների խնդիրը շարունակվում է նաև 2021 թվականին:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային: 2021թ. հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեի հավելուրդը կազմել է 18.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 58.2%-ով կամ 26.1 մլրդ դրամով:

5.4. Պետական պարտք

2021թ. փետրվարի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 8,723.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ աճելով 18.7%-ով: Սակայն, միևնույն ժամանակ, փոխարժեքի արժեզրկման հետևանքով, դրամով արտահայտված պետական պարտքն աճել է 30.9%-ով՝ հասնելով 4,605.6 մլրդ դրամի:

Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ դոլարային արտահայտությամբ 19.8%, իսկ դրամային արտահայտությամբ 32.1%-ով: **Եթե դիտարկենք կառավարության պարտքի պաշարը 2020թ. փաստացի ՀՆԱ-ի նկատմամբ, ապա այն կազմում է 70.2%, իսկ պետական պարտքի կշիռը կազմում է 74.5%:** Իհարկե, պարտք/ՀՆԱ հարաբերակցության ճշգրիտ հաշվարկման համար պետք է հիմք ընդունել 2021թ. ՀՆԱ-ն, սակայն որպես ուղենիշ, 2020թ. ՀՆԱ-ի նկատմամբ հաշվարկը ցույց է տալիս, որ հարկաբյուջետային կայունության տեսանկյունից գոյանում են իրական ռիսկեր, որոնց պատշաճ չկառավարելու դեպքում հետևանքները խիստ բացասական կլինեն:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



2021թ. առաջին ամիսներին գնաճը դրսևորում է արագացման միտում: 12-ամսյա գնաճը ընթացիկ տարվա փետրվարին հասել է 5.3%, ինչը ամենաբարձր ցուցանիշն է 2015-ից հետո: Կենտրոնական բանկը, արձագանքելով գնաճային սպասումների որոշ չափով արագացմանը, ընթացիկ տարվա փետրվարի 2-ին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5.5%, իսկ 2021թ. մարտի 16-ին կայացած ԿԲ խորհրդի նիստում որոշվել է թողնել անփոփոխ:

6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021թ. փետրվարին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները աճում են դանդաղ տեմպերով: Ավանդների աճի դանդաղման միտումը սկսվել է 2020 թվականի վերջից և պահպանվում է նաև 2021 թվականին: Փետրվար ամսվա վերջի դրությամբ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ավանդների ծավալը աճել է 4.4%-ով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



Ավանդների աճը հիմնականում պայմանավորված է եղել ձեռնարկությունների ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 4.0 տոկոսային կետ: Ոչ ռեզիդենտներից ներգրավվող ավանդների ծավալը նվազել է 3.9%-ով՝ ընդհանուր

ավանդների աճին հակազդելով 1.1 տոկոսային կետով: Նշված գործոնները տնտեսությունում անորոշությունների և անկայունության բարձր աստիճանի արտացոլումն են, ինչն արտահայտվում է ձեռնարկությունների կողմից ներդրումային գործունեության սառեցման (ազատ միջոցները ներդրվում են բանկերում տնտեսության իրական հատվածում ներդնելու փոխարեն) և ՀՀ տնտեսությունից ֆինանսական ռեսուրսների դուրսբերման միջոցով:

Վարկերի աճի տեմպը դանդաղում է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) աճը 2021 թվականի փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 10.9%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի աճին հիմնականում նպաստել են հիպոթեքային, արդյունաբերության և ծառայությունների ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.6, 2.7 և 2.6 տոկոսային կետ:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաճարակային իրավիճակը կրկին սկսում է վատթարանալ՝ առաջացնելով համավարակի տարածման 3-րդ ալիքի ուժգնացման վտանգներ: 2021թ. հունվար և փետրվար ամիսների ընթացքում նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը 2020թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համեմատ զգալիորեն նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 285 և 180 դեպք:

Սակայն, մարտ ամսին COVID-19-ով վարակման նոր դեպքերը կրկին սկսել են հաճախանալ՝ հասնելով միջին օրական 589 դեպքի: Մահվան միջին օրական դեպքերը նույնպես աճել են՝ հասնելով 9 դեպքի:

Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 33-րդ տեղը՝ նախորդ ամսվա 28-րդի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով՝ 35-րդը՝ նախորդ ամսվա 31-րդի փոխարեն:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



** 2021թ. մարտի 25-ի դրությամբ*

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **2020 թվականի բացասական զարգացումները շարունակվում են նաև ընթացիկ տարում:** 2021թ. հունվարին գրեթե բոլոր ցուցանիշների գծով գրանցվել է խոր անկում, ինչը փոքր-ինչ մեղմվել է փետրվարին: Սակայն, տնտեսությունը դեռևս գտնվում է անկման փուլում, իսկ մի շարք ցուցանիշների (արդյունաբերության, ծառայությունների, առևտրի և այլն) անկումների բարձր մակարդակները ցույց են տալիս, որ առկա են խորքային խնդիրներ, և պահանջվում են զգալի ջանքեր տնտեսական անկման տրենդը շրջելու և աճի փուլ վերադառնալու համար:

2. **Պետական ֆինանսների կառավարման ոլորտում կապիտալ ծախսերի իրականացման անկարողությունը դեռևս լուծում չի ստացել:** 2021թ. առաջին երկու ամիսներին կապիտալ ծախսերի ծավալը կրճատվել է 30.6%-ով՝ այն դեպքում, երբ նախորդ տարի կապիտալ ծախսերը նույնպես զգալի թերակատարվել էին: Արդեն երեք տարուց ավելի կառավարությունը չի կարողանում պատշաճ իրականացնել կապիտալ ծախսերի՝ իր կողմից սահմանված պլանը: Ինչպես նշել ենք նախորդ վերլուծություններում, այս վարքագիծը բացասական ազդեցություն է ունենալու ինչպես ընթացիկ տնտեսական ակտիվության, այնպես էլ երկարաժամկետ տնտեսական աճի և տնտեսության վերականգնման հնարավորությունների վրա:

3. **Կառավարության պարտքը 2020թ. փաստացի տվյալներով գերազանցել է ՀՆԱ-ի 60%-ը, իսկ 2021թ. փետրվարի վերջի դրությամբ արդեն իսկ գերազանցել է 2020թ. ՀՆԱ-ի 70%-ը:** Կառավարության պարտքը արդեն հասել է ռիսկային մակարդակի: Հաշվի առնելով նաև պետական ֆինանսների կառավարման համակարգի մի շարք հիմնախնդիրները (կապիտալ ծախսերի թերակատարում, ընթացիկ ծախսերի չհիմնավորված աճ, պարտքի անարդյունավետ օգտագործում) և պարտքի ռիսկային պորտֆելը (արտարժութային պարտքի մեծ կշիռը), կարող ենք նշել, որ կառավարոթյունն արդեն իսկ պետք է խիստ միջոցներ ձեռնարկի պարտքի բեռի նվազեցման ուղղությամբ: Այլապես, նման տեմպով և ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով պարտքի աճի դեպքում, հարկաբյուջետային կայունության ռիսկերը կարող են նյութականանալ՝ իրենց խիստ բացասական հետևանքներով:

4. **Կառավարության պնդումներն այն մասին, որ «Հայաստանի տնտեսությունը հետճգնաժամային վերականգնման առաջին նշաններն է ցուցադրում» չեն համապատասխանում իրականությանը:** Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում փետրվար ամսին գրանցվել է անկում, հետևաբար հետճգնաժամային վերականգնման մասին խոսելը խիստ ժամանակավրեպ է և չհիմնավորված: Նման հայտարարությունները չեն կարող դրական սպասումներ ձևավորել տնտեսավարողների շրջանում, քանի որ ակնհայտորեն կտրված են իրականությունից: Ավելին, դրանք ավելի են մեծացնում անորոշությունը և նվազեցնում վստահությունը պետական քաղաքականության նկատմամբ՝ հանգեցնելով տնտեսական վերականգնման վտանգմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*